ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում (ՊԻ) լավ ավանդույթ է ձևավորվել. յուրաքանչյուր տարի անցկացվում են ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտական նստաշրջաններ, որտեղ նրանք ներկայացնում են իրենց գիտական ձեռքբերումները: Ինստիտուտի կազմակերպած նմանօրինակ գիտական նստաշրջաններին հրավիրվում են նաև ակադեմիական այլ ինստիտուտների ու հանրապետության ԲՈՒՀ-երի երիտասարդ գիտաշխատողները և ասպիրանտները: Այդ միջոցառումները հատկապես անհրաժեշտ են ասպիրանտների ու հայցորդների համար. դրանով նրանց հնարավորություն է տրվում շփվելու առավել փորձառու գիտաշխատողների հետ, անկաշկանդ արտահայտվելու և արագ ինտեգրվելու գիտական շրջանակներին: Արտագնա գիտաժողովները մեծ նշանակություն ունեն նաև գիտական համագործակցության առումով:

ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ Պատմության ինստիտուտի կազմակերպած «ՀՀ ԳԱԱ ՊԻ երիտասարդ գիտաշխատողների XXXV գիտական նստաշրջան»-ը նախորդներից տարբերվում էր նրանով, որ զեկուցումները պատմագիտության կարևոր ճյուղը հանդիսացող աղբյուրագիտության մասնագիտությամբ էին: Այն կրում էր «Հայոց պատմության հիմնահարցերի աղբյուրագիտություն» խորագիրը:

Պատմական գիտության կարևոր ճյուղը հանդիսացող աղբյուրագիտությունն ուսումնասիրում է գրավոր աղբյուրները, հավաքում, սինթեզում և վերլուծում պատմական գիտության այլ օժանդակ մասնագիտությունների տվյալները: Առանց աղբյուրների պատմաբան-մասնագետը չի կարող որակյալ պատմագիտական տեքստ շարադրել:

Խորհրդային տարիներին Հայաստանում ստեղծվեց աղբյուրագիտության պատմագիտական դպրոց: Ինստիտուտում աշխատելու տարիներին հայկական պատմագիտությունը աղբյուրագիտական բնույթի հիմնարար հրատարակություններով հարստացրել են հայտնի պատմաբաններ Աշոտ Հովհաննիսյանը, Հրաչ Բարթիկյանը, Լևոն Խաչիկյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Գալուստ Գալոյանը, Վարդգես Միքայելյանը, Սիմոն Կրկյաշարյանը, Վազգեն Հակոբյանը, Լևոն Բաբայանը, Վրեժ Վարդանյանը և ուրիշներ: Ներկայումս էլ ինստիտուտում մասնագետ-

ներ են պատրաստվում, ուսումնասիրություններ կատարվում, գրքեր ու հոդվածներ հրատարակվում աղբյուրագիտության թեմատիկայով:

Գիտաժողովի նպատակն էր երիտասարդ գիտնականների հետազոտությունների միջոցով անդրադառնալ Հայոց հին, միջին, նոր և նորագույն ժամանակների պատմության տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ հայկական ու օտար ծագման աղբյուրների հաղորդած տեղեկություններին, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության և Արցախի հիմնախնդրի վերաբերյալ եղած նորահայտ աղբյուրներին, արժեվորել սկզբնաղբյուրները, ցույց տալ դրանցում եղած անճշտությունները, սխալներն ու վրիպակները՝ հնարավորության դեպքում բացահայտելով պատճառները: Բացի Պատմության ինստիտուտի երիտասարդ աշխատակիցներից, ասպիրանտներից ու հայցորդներից, գիտաժողովին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ ԵՊՀ-ից, Մատենադարանից, Արցախի պետական համալսարանից:

Գիտական նստաշրջանի բացումը և առաջին նիստը տեղի ունեցավ 2014 թ. հուլիսի 12-ին ԳԱԱ Արզականի գիտաժողովների տանը: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը*: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ակադեմիկոս* Վլադիմիր Բարխուդարյանը*:*

Նստաշրջանի առաջին նիստում (նիստավար՝ ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Դանիելյան*) ընթերցվեցին հին շրջանին և միջնադարին բնորոշ աղբյուրներին վերաբերող զեկուցումներ՝ «Արծրունիների մասին վկայությունները սեպագիր արձանագրություններում և միջնադարյան աղբյուրներում» (*Վահե Սարգսյան*, ՊՀ), «Սկյութական մշակույթի դրսևորումներն Արցախում. հնագիտական սկզբնաղբյուրները» (*Նժդեհ Երանյան*, ԵՊՀ), «Վանի թագավորության սեպագիր աղբյուրները Աղձնիքի մասին» (*Հարություն Խուդանյան*, ՊՀ), «Հայկական սկզբնաղբյուրները քրդերի մասին (XII–XV դդ.)»* (Գոռ Երանյան*, ՊՀ):*

Նստաշրջանի երկրորդ նիստում (նիստավար՝ ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Հարությունյան*) ընթերցվեցին նոր շրջանի աղբյուրներին առնչվող զեկուցումներ՝ «Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկը (աղբյուրագիտական դիտարկումներ)» (*Գայանե Այվազյան*, Մատենադարան), «Աուգուստ Ֆրայհեր ֆոն Հաքստհաուզենի վկայությունները Հայաստանի մասին (1856 թ.)» (*Գայանե Շախկյան*, ՊՀ), «Կ. Պոլսի Ազգային ժողովի ատենագրությունների աղբյուրագիտական արժեքը» (*Մանյա Նաջարյան*, ՊՀ), «Հայ փախստականների դրության արտացոլումը Կովկասի հայոց բարեգործական ընկերության արխիվային վավերագրերում (1896 թ.)» (*Լիլիթ Քոսյան*, ՊՀ):*

Նստաշրջանի երրորդ նիստում (նիստավար՝ ինստիտուտի Նոր պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր Ռուբեն Սահակյան*) ընթերցվեցին հետևյալ զեկուցումները՝ «Հայկական հարցի մասին Եգիպտոսի իսլամական «Ալ-Մուայյաթ» թերթի հրապարակումների աղբյուրագիտական արժեքը (1890-ական թթ.)» (*Նարինե Երանոսյան, *ՊՀ), ««Համբավաբեր» շաբաթաթերթը իբրև Կովկասի հայոց բարեգործական ընկերության գործունեության ուսումնասիրման աղբյուր» (*Նինետա Ադամյան, *ՊՀ), «Նորահայտ արխիվային նյութեր Արմին Վեգների հայասիրական գործունեության մասին» (*Մանուշակ Մարկոսյան, *ՊՀ), «Խորհրդահայ մամուլի գրաքննության պատմության ուսումնասիրման աղբյուրները (1920-ական թթ.)» (*Համո Սուքիասյան, *ՊՀ):*

Հուլիսի 13-ին տեղի ունեցած նստաշրջանի վերջին՝ հինգերորդ նիստում (նիստավար՝ ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու Համո Սուքիասյան*) ընթերցվեցին նորագույն շրջանի աղբյուրներին առնչվող զեկուցումներ՝ «Իշխանության մարմիններին ուղղված նամակները իբրև խորհրդահայ առօրեականության պատմության հետազոտման աղբյուրներ (1930-ական թթ.)» (*Գագիկ Ժամհարյան, *ՊՀ), «Արցախյան ազատամարտին հայ կանանց մասնակցության հարցի ուսումնասիրության աղբյուրները» (*Իսկուհի Ավանեսյան, *ԱրՊՀ), «Մերձավոր Արևելքի հայկական մամուլի հրապարակումները Գետաշենի և Շահումյանի անկման վերաբերյալ» (*Նվարդ Սեդրակյան, *ՊՀ), «Արցախյան շարժման վերաբերյալ «Ազատամարտ» թերթի հրապարակումների աղբյուրագիտական արժեքը (1991–1992 թթ.)» (*Լուսինե Սարգսյան, *ՊՀ):*

Այնուհետև տեղի ունեցավ աշխույժ հարց ու պատասխան, գիտական բանավեճ, կարծիքների բախում: Սա, անկասկած, կարևոր փորձառություն էր հատկապես այն երիտասարդների համար, ովքեր գիտության աշխարհ մուտք գործելու առաջին քայլերն էին անում:

Վերջում քննարկվեցին և ամփոփվեցին գիտական նստաշրջանի արդյունքները (նիստավար՝ ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Կարեն Խաչատրյան*):*

Վերջում տեղեկացվեց, որ լավագույն զեկուցումները կհրատարակվեն Պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի 15-րդ համարում:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ